

Հաւատացեալին վարձքը

Անկասկած, որ դժուար է այս դարու մանաւանդ այս երկրին մէջ, հաւատք ունենալ եւ գործել: Սակայն խնդրողին պիտի տրուի (Մտք. 7.7):

Եթէ մենք առանց երկմտելու աղօթենք Աստուծոյ եւ խնդրենք, որ մեզ զօրացնէ մեր հաւատքին մէջ, Աստուած պիտի լսէ մեր աղօթքը:

Եւ այս բոլորին փոխարէն, սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, Աստուած առատօրէն պիտի վարձատրէ մեզ:

Նոր կտակարանին մէջ յաճախ Աբրահամի անունը յիշուած է իբր օրինակ զօրատր հաւատքի:

Յակոբոս առաքեալի Ընդհանրական նամակին մէջ կը կարդանք. «Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու այն իրեն արդարութիւն սեպուեցաւ եւ ինք Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ» (Յակ. Ընդ. Բ. 23): Աբրահամ Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ: Արդեօք ասկէ աւելի մեծ վարձատրութիւն կարելի՞ է երեւակայել: Արդեօք կա՞յ մէկը, որ չի փափաքիր Աստուծոյ բարեկամը ըլլալու շնորհքին արժանանալ:

Մենք բոլորս ալ, սիրելի հաւատացեալներ, կրնանք Աստուծոյ բարեկամը ըլլալու շնորհքին արժանանալ, եթէ հաւատք ունենանք եւ մեր գործերով զօրացնենք մեր հաւատքը՝ ինչպէս ըրաւ Աբրահամ:

Աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ Սուրբ հոգիով լեցնէ մեզ, որպէսզի զօրանանք մեր հաւատքին մէջ եւ մեր գործերով կենդանի պահենք մեր հաւատքը, որպէսզի կարենանք Աստուծոյ բարեկամը ըլլալու շնորհքին արժանանալ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, Նարեկ Սրբազան պիտի հանդիպի 18-40 տարեկան հայ երիտասարդ-երիտասարդուհիներու հետ՝ ծանօթացման ընկերային հաւաքով ու Աստուածաշունչի սերտողութեամբ քննարկելու համար հայ քրիստոնէական կեանքը: Միաժամանակ, նոյն ժամուն եւ նոյն վայրին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քինյ. Լոշխաճեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի զաւակներուն համար:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 – facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ԲՈՒ ԽՍՍԵՂ ԽՍ ՌՏԵՐՈՐՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՐՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019

ԹԻԻ 36

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 13.1-11: Բ. Կր. 7.4-16
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍ 7.31-37

ՏՕՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԾԱԾԻՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՅԱՆՆԱՅԷ
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ
7.31-37

Յիսուս Տիրոսի սահմաններէն մեկնելով, Միդոնի վրայով անցաւ Դեկապոլիսի սահմաններէն եւ եկաւ Գալիլիայի ծովեզերքը: Եւ ահա իրեն բերին խուլ եւ համր մարդ մը խնդրելով, որ ձեռքը դնէ անոր վրայ: Յիսուս զայն ամբողջէն հեռու մէկ կողմ տարաւ, մատները անոր ականջներուն մէջ դրաւ, յետոյ թքեց եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ. «Եփփաթա», որ կը նշանակէ «բացուէ»: Նոյն վայրկեանին անոր ականջները բացուեցան եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ: Յետոյ Յիսուս պատուիրեց ժողովուրդին, որ ռեւէ մէկուն չըսեն: Սակայն ինչքան ալ ան կը պատուիրէր, որ չտարածեն, անոնք առաւել չափով կը պատմէին այս մասին: Մարդիկ աւելի եւս կը զարմանային եւ կ'ըսէին. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. տեսէք, խուլերուն իսկ լսել կու տայ եւ համրերուն՝ խօսիլ»:

ԱՌԱԿԱՑ (Գ. 23, 19-25)

Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ բու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմոլն ու շոպլը աղֆատ կ'ըլլան եւ շատ բուռն՝ պատռած հանդերձներ կը հագցնէ:

Հնազանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր բու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանիկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, իրատն ու հանճարը:

Արդարին հայրը շատ պիտի ցնծայ եւ իմաստուն զաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ: Թո՛ղ բու հայրդ ու մայրդ բու վրայ ուրախանան ու քեզ ծնանողը թող ցնծայ:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ
13.1-11

Ահաւասիկ Բաբելոնի վերաբերող Տիրոջ պատգամը, որ յայտնուեցաւ Ամոսի որդի Նայիին. Պատերազմի դրօշ կանգնեցէ՛ք մերկ լերան վրայ, ո՛վ իսրայէլացիներ, բարձրադաղակ ողջունեցէ՛ք եկող բանակները, մի՛ վախնա՛ք, ձեռքով նշան ըրէ՛ք անոնց, որոնք կու գան Բաբելոնի վրայ:

Ինծի համար նուիրագործուած պատերազմիկներն են անոնք, որոնք եւ Բաբելոնի դէմ պիտի դրկեմ որպէսզի գայն նուանելով բարկութիւնս յագեցրնեն եւ ինծի հետ ուրախանան:

Լսեցէ՛ք լեռներուն վրայ բազմութիւններու աղմուկը. ձայնը բազմաթիւ ազգերու, ձայնը թագաւորներու եւ հաւաքուած ժողովուրդներու: Երկնաւոր Զօրքերու Տէրը ի՛նք հրամայեց սպառազինուած այս ժողովուրդներուն, որ գան հեռու երկիրներէն, հեռաւոր հորիզոններէ. եւ իր պատերազմիկներուն հետ Տէրը ինք կու գայ ամբողջ աշխարհը աւերելու:

Ողբացէ՛ք, որովհետեւ մօտ է Տիրոջ օրը, արդէն կը հասնի Աստուծոյ հարւածը:

Այդ պատճառով ալ բոլորին ձեռքերը պիտի թուլնան, մարդոց սիրտերը վախով պիտի լեցուին, իշխանները խռովի պիտի մատնուին, ծննդական կնոջ մը պէս երկունքով պիտի բռնուին: Ամէն մարդ իր ընկերը պիտի մեղադրէ եւ ամօթէն իրենց դէմքը բոցի պէս պիտի կարմրի:

Արդարեւ ահա կու գայ Տիրոջ օրը, երբ Տէրը անողոք գայրոյթով ու սաստիկ բարկութեամբ անապատի պիտի վերածէ աշխարհը եւ անկէ բնաջինջ պիտի ընէ մեղաւորները:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՄԱԿԸ
ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ
7.4-16

Մեծ վստահութիւն ունիմ ձեր վրայ. մեծապէս հպարտ եմ ձեզմով: Մեր կրած բոլոր նեղութեանց մէջ ինքզինքս միտքարուած եւ մեծապէս ուրախ կը զգամ: Որովհետեւ Մակեդոնիա հասնելէն ի վեր երբեք հանգիստ չունեցանք, այլ ամէն կողմէ նեղութիւն: Մէկ կողմէ արտաքին թշնամութիւնները կը նեղէին մեզ, իսկ ներքնապէս՝ մեր վախը: Բայց Աստուած, որ կը միտքարէ սրտաբեկները, Տիտոսի գալովը մեզ միտքարեց:

Ուրախացուցիչը միայն Տիտոսի գալը չէր: Ուրախացանք մանաւանդ, երբ լսեցինք, թէ ի՛նչպէս գոհ մնացած էր ձեզմէ: Մեզի պատմեց թէ անակութեամբ կը սպասէք ինծի, թէ ո՛րքան ցաւած էք պատահածին համար եւ թէ ի՛նչպէս կապուած էք ինծի: Զէք կրնար երեւակայել որքա՛ն ուրախ եմ: Ճիշդ է որ նամակովս քիչ մը վշտացուցի ձեզ, բայց հիմա չե՛մ գոչար ըրածիս, թէ եւ գրելու վերջ գոչացեր էի, քանի կը տեսնեմ, թէ այդ նամակս միայն կարն ժամանակ մը վշտացուցեր է ձեզի: Ուրախ եմ հիմա, ո՛չ թէ ձեզ ցուցուցած ըլլալուս համար, այլ՝ որովհետեւ այդ տրամութիւնը պատճառ եղաւ որ ապաշխարէք: Եւ որովհետեւ ձեր տրամութիւնը Աստուծոյ գործին ծառայեց, եւ պէտք չունիմ այլեւ խստութեամբ գալու ձեզի: Աստուած երբեմն մեզ կը ցուցնէ ապաշխարութեան միջոցաւ փրկութեան առաջնորդելու նպատակով, որուն համար չենք գոչար բնաւ: Մինչդեռ աշխարհի ցաւը մահուան կ'առաջնորդէ: Արդ, տեսէք, թէ Աստուծոյ պատճառած ցաւը ի՛նչպէս անտարբերութենէն դուրս բերաւ ձեզ եւ մղեց, որ դուք ձեզ արդարացնէք: Զայրացա՛ք, տագնապեցա՛ք, անձկութեամբ լեցուցեցա՛ք:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՆԻԿԻՈՅ Ա. ԺՈՂՈՎՈՅՆ

318 ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

Եկեղեցական հայրերու գումարած առաջին տիեզերական ժողովի յիշատակը, տօնի ձեւով կը կատարուի հայոց եկեղեցւոյ մէջ, ինչպէս միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակը (Կ. Պոլիս եւ Եփեսոս):

Նիկիոյ ժողովը գումարուեցաւ 325 թուականին, 318 հայրապետներու մասնակցութեամբ, Կոստանդիանոս կայսեր արտօնութեամբ: Ժողովը գումարուելու շարժառիթը Ադեֆանդրիացի երէց Արիոսի հետաքրքրութիւնն էր: Արիոս կը ժխտէր Յիսուսի հաւասարութիւնը Հօր՝ Աստուծոյ հետ եւ չէր ընդուներ Յիսուսի Աստուած ըլլալը: Ըստ Արիոսին Յիսուսը պարզապէս գերմարդկային արարած մըն էր:

Նիկիոյ ժողովին Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի կողմէն կը մասնակցէր Արիստակէս եպիսկոպոսը: Քննուեցաւ Արիոսի մուլար ու հերետիկոսական շարժումը, դատապարտուեցաւ անոր վարդապետութիւնը, հաստատուեցաւ ճշմարիտ դաւանանքը եւ կազմուեցաւ «Հաւատոյ հանգանակ»-ը:

Նիկիոյ հանգանակը աւելի նոխարացած ձեւով կ'ըսուի եկեղեցւոյ մէջ՝ պատարագի ընթացքին, աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք:

Հաւատամքի բովանդակած կէտերը իւրաքանչիւր քրիստոնեայի համար քրիստոնեական հաւատքի եւ դաւանութեան բանաձեւերն են:

Հաւատամքը կը բովանդակէ Աստուծոյ, Որդւոյ, Ս. հոգւոյ, եկեղեցւոյ, Մկրտութեան, մեղքի, մեռելներու յարութեան, յաւիտեանական կեանքի, վերջին դատաստանի, երկինքի թագաւորութեան եւ հոգիներու անմահութեան մասին քրիստոնեաներու ունեցած հաւատքն ու դաւանութիւնը:

Նիկիոյ, ինչպէս նաեւ միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակի օրը եկեղեցւոյ մէջ կ'երգուին հայրապետներու նուիրուած շարականներ, ուր անոնց ներքոյը հիւսուած է, որպէս հաւատքի հիմքերը հաստատողներ:

Ս. ՀՈԳԻՈՎ ԶՕՐԱՆԱԼՈՒ ԱՂՕԹՔ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէր Տէր: Լսէ՛ մեզ, ո՛վ Աստուած, մեր Փրկիչը: Ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի վուր տեղ չյոգնինք. այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ՛: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ քու ողորմութեամբդ հատուցանէ՛ մեզի, առատապէս: Զու ամենապօր աջիդ հովանիին տակ ծածկէ՛ մեզ, եւ Սուրբ հոգիիդ պօրութեամբը պօրացու՛ր մեզ, ո՛վ Տէր: Աչքի բիբի պէս պահէ՛ մեզ եւ քու բարերարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի քու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառաբանութեամբ քու փառքդ կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: